

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013Թ.

### 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2013թ-ի հուլիսի 8-ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի

Սարդարապատ համայնքի ղեկավարի 2013թ-ի 1-ին կիսամյակի հաշվետվությունը: Համայնքի ղեկավարի հաշվետվությանը մասնակցում էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար տիկին Փ.Կարապետյանը:

2013թ. մեր համայնքը դիմավորեց քաղաքական եռուգետով, կազմակերպված անցկացրեց նախագահական ընտրությունները: Վետրվարի 18-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությանը մեր համագյուղացիները մասնակցեցին շատ ակտիվ, արդյունքում գործող նախագահի օգտին քվեարկեցին ընտրողների 76 % -ը:

Նախապատրաստական աշխատանքներ էին կատարվում գյուղատնտեսական տարին սկսելու համար: «Արաքս» ՋՕԸ-ի հետ մաքարվում էին ոռոգման առուները, վերանորոգվում և տեղադրվում էին խորքային հորերը:

Գյուղատնտեսական աշխատանքներին նպաստեցին պետության կողմից սուբսիդավորված ագրոտական պարարտանյութի և

դիզվառելիքի ներկրումը համայնք:

Ոռոգման ջուրը ստանալուց հետո ազգաբանակչությունը  
ամբողջովին զբաղվում է հողային աշխատանքներով:

Մակայն 2013թ-ի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով  
վնասվեց համայնքի 502,54 հա հողատարածք: Վնասվածությունը  
կազմել է 50-100%:

Կարկուտից հետո համայնքի բնակիչներից՝ շուրջ 199  
տնտեսություններ, պետության կողմից ստացան դրամական  
օգնություն, 220 ընտանիք՝ դիզվառելիք և տարբեր տեսակի  
սերմնացումներ:

Ներկա պահին ավարտվել է ծիրանի և աշնանացան ցորենի  
բերքահավաքը: Ծիրանի բերքի մի մասը արտահանվել է ՌԴ և մթերվել  
է գործող մթերման գործարաններում:

Խաղողի այգիների մի մասը, որոնք չեն ընկել կարկուտի  
տարածքում, գտնվում են լավ վիճակում: Պայմանագրեր են  
կնքվել Երևանի կոնյակի գործարանի, «Մուլտի Գրուպ»  
կոնցեռնի հետ:

Մայիսից վերաբացվեց գյուղի մանկապարտեզը երեք խմբերով,  
երեխաների հաճախելիությունը հասնում է մինչև 110-ի:

Դեռևս 2012թ-ի հունվար ամսին Առողջապահության  
նախարարության ՃԻԳ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն  
գյուղում 2012-2013թթ. կառուցվելու էր տիպային բուժամբուլատորիա:  
Արդեն իսկ ավարտվել է նոր բուժամբուլատորիայի շենքի  
կառուցումը:

Ընթացքի մեջ է գտնվում համայնքի ներքին ցանցի հիմնանորոգման  
աշխատանքների հարցը:

«Արաքս» ՋՕԸ-ի հետ քննարկվել են համաֆինանսավորմամբ  
ներտնտեսյա ջրանցքների վերանորոգման հարցը:

Անցած վեց ամիսների ընթացքում կատարվել են  
վերականգնողական աշխատանքներ, գյուղամիջյան և դաշտամիջյան  
ճանապարհների վրա վերանորոգվել և բացվել են երկու խորքային  
հորեր, կամուրջներ, ինչպես գյուղում, այնպես էլ դաշտամիջյան  
ճանապարհների վրա:

Անցած վեց ամիսների ընթացքում կայացվել է համայնքի  
ավագանու յոթ նիստ, համայնքի մեկ ընդհանուր ժողով:

Գյուղապետարան տարբեր հարցերով դիմել են շուրջ 920  
քաղաքացիներ:

2013թ. 1-ին կիսամյակում համայնքում ծնվել է 29 երեխա,  
մահացել՝ 25 մարդ:

ՀՀ բանակ են զորակոչվել 22 զորակոչիկներ:

Մեփական եկամուտներից հավաքագրվել է 11010,0 հազար  
ՀՀ դրամ:

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ